ՄԱՀՈՒԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Կիզիչ արեւը կապոյտ բոցի վերածած էր անապատի օդը, թուփերը ընկճուած ու կախ թեւերով կը հեւային՝ տենչալով զով առուակի մը համբոյրին։ Ոչ մէկ թռչուն կը սաւառնէր, ոչ մէկ կենդանի կ՚երեւար ամայութեան մէջ։ Անապատի ճամբան կը ցածնար ու կը բարձրանար կարելով ոսկեմշուշ հորիզոններ։

– Քշեցէք առաջ, յանկարծ լսուեցաւ վայրենի մենութեան մէջ խռպոտ ձայն մը և մտրակները իջան կորաքամակ ջորիներու կողերուն. կախ ականջներով հէգ անասունները հազիւ կը փոխէին փոշելից սմբակները։

– Անէ՛ծք – մրմնջեց տասնապետ զինուորը՝ սրբելով իր ճակտին տաք քրտինքը։ Շանթող նայուածք մը նետեց ութը կալանաւորներու վրայ, որոնք պրկուած կենդանիներու քամակին՝ լուռ և անտրտունջ կ՚երթային մահուան ճանապարհին։

– Ինչո՞ւ ձեզ կտոր կտոր չըրին անզգներու կեր տալու, մոլեկան սեւազգեստներ։ Դարձեալ գոչեց տասնապետը և շանթող ակնարկը գնաց ու փշրուեցաւ գազանաղէմ ժայռերու վրայ։

– Վասակ մարզպանը մեր թագաւորին նուէր կը տանի այս դժբախտները, ըսաւ քառասունի մօտ զինուոր մը, թաց լաթ մը խածնելով, մինչ պղտոր քրտինք մը կը հոսէր թաւ կուրծքին վրայ։

Վեց պարսիկ զինուորներ և ութը հայ կալանաւորներ կ՚երթային տաք անապատի մէջէն. կարծես այդ օրուան արեւը վերջանալիք չունէր։ Կալանաւորները սկսան մեղմ ձայնով աղօթքի բառեր արտասանել, որոնց ձայնը մինչեւ հողը չէր հասներ։ Զինուորները չէին հասկնար և անուշադիր կը քշէին իրենց ջորիները։ Զարմանալի ոյժ մը կեանք կու տար ձերբակալուածներուն, զուարթ էին, պատերազմի սիրահար մարտիկի պէս անվեհեր։ Ութը միասին սկսան անոյշ երգ մը։ Աղօթք էր թէ մարտի երգ, զինուորները չհասկցան։

– Մի՞թէ չեն այրիր այս կիզիչ օդէն, ի՞նչ փափաք երգելու, ըսաւ տասնապետը սրտնեղած։ Մահուան ճանապարհը կարծես աւելի կ՚երկարէր, հորիզոններ կը բացուէին բլուրներու ետեւ, և զարձեալ սպիտակ ճամբան անշարժ ու յոգնատանջ երկարած էր անհունէ անհուն։

– Է՛յ, ծերունի, ինչո՞ւ չմեռար քու երկրիդ մէջ, գէթ այս անտանելի ճամբայէն կ՚ազատէինք, ըսաւ նորէն պահակներու պետը, դառնալով դէպի ալեւոր ու նիհար կղերականը որ աւելի կախուած էր քան թէ նստած վախտ ջորիին վրայ։

Ծերունին չէր գիտեր պարսկերէն, դարձաւ իր քովինին և հարցուց։

– Ինչ կ՚ուզէ այս զինուորը, Սահակ եպիսկոպոս։

– Մեր մահը կը փափաքի, Դաւոնդ երէց, պատասխանեց Ռշտունեաց եպիսկոպոսը։

– Ըսէ՛ իրեն թէ այդ գեղեցիկ օրն ալ պիտի գայ։

Երիտասարդ զինուոր մը կարծես աւելի կարեկից այդ դժբախտ կապեալներուն՝ զարմացած հարցուց իր ընկերոջ.

– Չեմ հասկնար, ըսաւ, անխելքութիւն չէ՞ կրօնքի համար անոյշ կեանքը զոհել, արեւէն զրկուիլ, արհամարհել փառք, հարստութիւն։

Սահակ եպիսկոպոսը իրեն նայեցաւ, բայց չուզեց պատասխանել, ինչ ըսէր անոր որ նիւթէն աւելի բան չէր հասկնար, որուն կեանքը գաղափարական չունէր, և հոգին իր կաշիէն դուրս չէր տեսներ։

– Իններորդ ժամը մօտեցաւ կարծեմ, ըսաւ քառասունի մօտ կղերական մը, որուն սեւ մետաքսէ քօղը՝ իջած մինչեւ ճակատին կէսը, կը մատնէր բարձր աստիճանը։ Կալանաւորները մասնաւոր վերաբերմունք մ՚ունէին իրեն հանդէպ, նա մէջտեղէն կը ջորեվարէր նստած գորգի մը վրայ, որ ծածկած էր կենդանիին մարմինը։ Ինքն ալ շղթայուած իրրեւ հասարակ ոճրագործ մը և կարծես աւելի հսկողութեան տակ էր քան միւսները։

– Քարերու շուքերը դէպի արեւելք երկարած են, ամենապատիւ տէր, ըսաւ Դաւոնդ երէցը, այս այն ժամն էր երբ խաչուեցաւ մեր Փրկիչը, ի՛նչ գեղեցիկ առիթ մեզի համար չարչարանքի սաղմոսներէն երգել։

Յովսէփ կաթողիկոսը նայեցաւ Մուշէ երէցին, որ լուռ ու մունջ կ՚երթար Արշէն երէցին հետ, – Տրտում կը տեսնեմ քեզ Մուշէ, մենք երջանիկ ենք, պէտք է ուրախանանք, օրհնենք մեր Փրկիչը որ արժանի կ՚ընէ իր սիրոյն համար զոհուելու։

– Ո՜հ, չեմ կրնար աչքէս հեռացնել, պատասխանեց քահանան, այն ահաւոր տեսարանը որ պարգուեցաւ տանս մէջ, երբ զիս Վասակի զինուորները բռնի քաշեցին սիրելիներուս գրկէն, զաւակներս կու լային, երէցկինը մարեցաւ ցաւէն, բայց ո՞վ կը նայէր թշուառներուն երեսը, ո՞ր սուրը երբեք գութ ունեցաւ։ Արշէն երէցին աչքերէն կը հոսէին խոշոր արցունքներ, երկար ա՛խ մը քաշեց, և աչքերը գացին վեր, շատ վեր հանգչելու բարկ կապոյտին մէջ։

Ինքն ալ ունէր տան ցաւ, ինքն ալ թողած էր սիրելիներ ու թերեւս իր քսանամեայ Մարիամը յափշտակուած էր Պարսիկներէն։

– Որբ չեն անոնք սիրելի Մուշէ, ըսաւ կաթողիկոսը, գուն քու անձդ Քրիստոսի նուիրեցիր, միթէ ինքը պաշտպան պիտի չըլլա՞յ քու սիրելիներուդ։ Իրմէ աւելի լաւ հա՞յր ես արդեօք։

– Քաւ լիցի ամենապատիւ տէր, պատասխանեց երէցը, բայց խոշոր արցունքները չէին դադրիր։ Դաւոնդ երէցը մխբրեցաւ իր երկնային խոկերու մէջ՝ մտիկ ճուած իր երկնային խոկերու մէջ՝ մտիկ չըրաւ այս խօսակցութիւնը։ Գիտէր թէ Վասակի և Պարսիկներուն ամէնէն ատելի էր, զինքը կը ճանչնային երկու աշխարհներու մէջ ալ, ապստամբ, անվախ և երկաթէ կամքով մարդն էր, բանակներու հոգին, Քրիստոսի ահաւոր մարտիկը, Աւարայրի ծածանող դրօշակը։ Հիմա կալանաւոր, շղթայուած և գերի, Պողոս առաքեալի նման կ՚երթար կայսեր առջեւ ալ խոստովանելու իր հաւատքը և ընդունելու մարտիրոսի արիւնոտ պսակը։

– Կարծեմ իններորդ ժամն է, կրկնեց Յովսէփ կաթողիկոսը, սկսինք մեր աղօթքները։ Անոնք ձեռնակապ չկրցան խաչները։ Անոնք ձեռնակապ չկրցան խաչակնքել երեսնին, ճառագայթ մ՚իջաւ արեւէն ամէն մէկուն ճակտին հրեղէն խաչ մը գնելու։ «Ես առ Աստուած կարդացի» սկսաւ կաթողիկոսը, իրար մօտ եկան, երկինքի խորանին առջեւ, ամփոփ, սիրտ սրտի մօտ և այնքան լի հաւատքով ու ջերմեռանդ՝ որ կարծես թէ սաղմոսի վանկերը ոսկեզօծ թռչուններու փոխուած կը կերթ ոսկեզօծ թռչուններու փոխուած կը թեւածէին իրենց վրայ։ «Լոյս զուարթ»ը, երգեց տէր Մուշէն զգայուն և յուզիչ ձայնով մը, զինուորները խոնարհած իրենց դէմքերը անշշուկ մտիկ կ՚ընէին, իրենց կը թուէր թէ կը հասկնային այդ երգը, մեղմութիւն մը կ՚իջնէր իրենց սրտերուն վրայ, զով անձրեւ մը մրրկած դաշտերու մէջ, այժմ կը զգային զովարար ամպի մը շուքը, անապատը կը քաղցրանար, օրուան դաժանութիւնը կարծես երկնային վերջալոյսի կը փոխուէր։

– Անշուշտ իրենց Աստուածը կը կանչէ, ըսաւ տասնապետը իր մտիկ զինուորին։

– Կարծեմ մահուան երգ է, պատասխանեց զինուորը, շատ տխուր շեշտ ունի։ Մահը կ՚ըսեն գեղեցիկ երգ ունի, և այս քրիստոնեաները երգելով կը մեռնին։

«Եկեալքս ի մտանել արեգական տեսաք

զլոյս երեկոյիս », Մուշէի բերնէն առաւ Աբշէն տէր հայրը. իր ձայնը մեղմ էր և յաճախ կը խեղդուէր հեծեծանքներու մէջ։ Երգերու վանկերը հեռացան հորիզոնէն անդին, աշխարհ լուռ մտիկ ըրաւ, երկինքն հաւաքեց զանոնք ինչպէս ոսկի շուշաններ, և մարդիկ իրենց մահը կը խորհէին։

— « Երթայք խաղաղութեամբ » ըսաւ կաթողիկոսը փակելով երեկոյեան ժամերգութիւնը։ Սամուէլ երէցը, Աբրահամ սարկաւագը գրեթէ չխօսեցան ամբողջ ճամբու երկայնքին, ամէն մարդ իր սիրտն ունի։ Սամուէլ քահանան ստէպ կը նայէր սպառած ճամբուն որ կը հեռանար դէպի Աբոտազ իր սիրելի հայրենիքը, միակ կապը որ կար բաժնուող սրտերու մէջ։

— Աբրահամ սարկաւագ, կանչեց Սամուէլ, հեռուն կարծես թանձր փոշիի ամպ մը բարձրացաւ։ Քաջալ սարկաւագն ալ նայեցաւ ետ և բոլորը ուշադրութիւնն բաժնուած հորիզոնին վրայ դարձուցին։ Ձիաւորները կանգ առին, դիտեցին հեռուն և աւելի սեղմ շրջապատեցին կալանաւորները։ Ո՞վ էին արդեօք որ սրարշաւ կու գային, մի՞ գուցէ հայ կտրիճներ ըլլային գերիներն ազատելու։ Ձիաւորները ահազանգի կեցան։ Բազմաթիւ ձիաւորներ էին որ ալիքի պէս վէտվէտուն կը սուրային, զէնքերու և վահաններու փայլերը նշողեցին։ Հեծեալները եկան, մօտեցան թշուառ կարաւանին։ Հայերէն բառեր լսուեցան բարձր քրքիջներու մէջէն։ Ձիաւորները աւելի մօտեցան ու կարծես իրենց հեղեղին առջեւ պիտի քշէին տանէին թշուառները կարաւանը՝ եթէ կալանաւորները ճամբայ չբանային։ Շողշողուն զրահներով վաշտին մէջ տեսնուեցաւ ոսկեսանձ սեւ երիվար մը, վրան աշտանակած էր ոսկի և արծաթ զամերով ասղնուած բարձրաստիճան իշխան մը։

— Ո՞վ է արդեօք հարցուցին քահանաները իրարու։

— Թերեւս պարսիկ զօրավար մը, ըսաւ Մուշէ քահանան։

— Աւելի ուրացող նախարար մը կը թուի, աւելցուց Աբշէն քահանան։

Երբ գրեթէ իրար խառնուեցան, Ղեւոնդ երէց հարցուց ձիաւորներէն մէկուն.

— Ո՞վ էք բարեկամներ և ո՞ւր կ՚երթաք այսքան բազմութեամբ։

— Սիւնեաց մեծ իշխանին շքախումբն է, պատասխանեց զինուորը։ Իսկ դուք ո՞վ էք, ինչո՞ւ շղթայուած ձեզ կը տանին։

— Մեզ մի՛ հարցներ բարեկամ, ըսաւ Ղեւոնդ երէցը, ամէն մարդ իր ճամբան ունի։

— Ահա կը մօտենայ այդ լիրբ անօրէնը, անշուշտ բարեւ ալ պիտի տայ մեզի, ինչ պիտի խօսինք Ղեւոնդ երէց, հարցուց կաթողիկոսը։

— Զորցած ծառին ջուր տալով չի կանանչնար, ամենապատիւ տէր, պատասխանեց Ղեւոնդ երէցը, Վասակի սրտին մէջ Աստուծոյ ձայնը այլ եւս արձագանգ չունի, թող գայ և անցնի չոր հովի նման։

Վասակ լսեց վերջին բառը և չհասկըցաւ թէ ինչ կը խօսէին երկու մեծ կալանաւորները։

Ղեւոնդ երէցը լսեց իր մօտ փրփրաշուրթն երիվարին փնչիւնը, դարձուց աչքերը դէպի ետ. ահա իր մօտ կանգնած էր Վասակ իր հսկայ ձիով և արեգնափայլ զրահներով։ Ձին սանձը կը կրծէր։ Լաւ կը ճանչնար այդ զժբախտ կալանաւորները, իր ոխերիմ թշնամիներն էին, հիմա իր գեղեցիկ նուէրները արքայից Աբքային։ Իսկոյն վար իջաւ ձիէն, գլուխը բաց ողջունեց՝ համբուրելով անոնց մաշած ձեռքերը։ Գիտէր թէ անոնք մահուան կ՚երթային և կեղծ տրտմութեամբ հարցուց.

— Ինչպէս, դուք կալանաւորնե՞ր։ Ո՞վ համարձակեցաւ ձեր սուրբ ձեռքերուն շղթայ դնել։ Անիծեալ Պարսիկներ, մանաւանդ անխելք և յիմար պատերազմ։

Ղեւոնդ երէցը անայլայլ կերպարանք մ՚առաւ, աչքերուն մէջ թէպէտ կար ցաւ ու կարեկցութիւն, սակայն զուարթ դէմքով պատասխանեց։

— Ո՜հ, դուք էք Սիւնեաց տէր։ Մեզ կը հարցնէիք, մենք ալ կ՚երթանք մեր պակը առնելու, ամէն մարդ նպատակ մ՚ունի, ոմանց փառքի ճամբան երկրէ երկիր կ՚երթայ, կարի, ուրիշներունը երկնէ երկին։ Ես քահանայ եմ և շատ մեռնողներու հաղորդուցի կեանքի մասին, ինձ ըսին թէ ոսկեայ կեանքի մասին է, ինչ կը նշանակէ այդ կեանքը կը սիրէք այնպէս չէ՞։

Վասակ խոնարհեցուց իր աչքերը, կեանքն ոսկեղէն ստուեր է, կրկնեց ինքնիրեն։ Սակայն իսկոյն մոռալուտ փառքի ձայն լսեց որ իրեն կ՚ըսէր — Ո՛չ, դուն ծնած ես վայելելու և թագաւորելու համար։

— Մեր սիրելիները մնան, շարունակեց Ղեւոնդ երէցը, երիտասարդներ հերոսաբար իրենց կեանքը տուին Քրիստոսի և հայրենիքի համար, հիմա կարգը մերն է տալու ինչ որ գերագոյն բան ունինք։ Ձեմ գիտեր թէ այս ճանապարհը որո՞ւ համար փառքի կամ մահուան ճանապարհ պիտի ըլլայ։

Վասակ պատասխան չտուաւ և լուռ խորհրդածեց թէ անոնք ստոյգ մահուան կ՚երթային, իսկ ինքը ոսկեղէն թագով պիտի պսակուէր աշխարհի ամենամեծ արքայէն։ Վատահ էր ատոր և չէր կրնար սանձել իր հոգին որ կը թռչէր երիվարէն աւելի արագ, հովէն աւելի թեթեւ։

— Կարելի էր խնայել այս խեղճ երիտասարդները, խնայել արցունք և աւերակ՝ եթէ հեռուէին իմ խորհուրդներուս, ես ամէն ջանք թափեցի, ըսաւ Վասակ, ես լուացի ձեռքերս ու մեղաւոր չեմ իրենց մահուան։

— Աւերակները կը շինուին, արցունքները կը քամուին, բայց երբ հոգիները կործանին՝ ալ չեն շինուիր, պատասխանեց Ղեւոնդ երէցը։

Երեկոն արդէն իջնելու վրայ էր, շուքերը երկարած և թանձրացած։ Գաղջ սիւք մը կը շրջէր դաշտերուն վրայ և անապատային բնութիւնը կը քօղարկուէր աստղազարդ սեւ բեհեզի մը տակ։

Բլրան մը կողին տեսնուեցաւ հողածածուկ տուներով գիւղակի պէս բան մը, քանի մը հիւանդ ծառերով՝ որոնք առուակի մը քով ապաստան՝ խոյս տուած էին մահաբեր անապատէն։ Մէկ երկու աղօտ ճրագներ ցոյց տուին մարդկային կեանքի նշոյլ մը։ Ճանապարհի երկարութեան վրայ աւելի մահատուն քան վրայ աւելի մահատուն քանի։

— Փակեցէք այս կալանաւորներու ձեռնակապերը, հրամայեց Վասակ պահակներուն, անոնք այս գիշեր իմ թանկագին հիւրերս պիտի ըլլան։ Ո՜րքան երջանիկ պիտի ըլլամ, ո՛վ սուրբ հայրեր, դարձաւ քահանաներուն, եթէ ընդունիք իմ հրաւէրս միասին ընթրելու։

Քահանաները իրարու երես նայեցան, ինչ պատասխանէին այդքան մարդկային խոցոտիչ կեղծաւորութեան, թերեւս Մուշէ քահանա, կամ Սամուէլը փափաքէին մեքիչ մը հանգստաւէտ ժամեր անցնել մատաքէ բարձերու և փափուկ գորգերու վրայ ոսկեհիւս վրանի մը տակ, սակայն Ղեւոնդը, Սահակ եպիսկոպոսը կամ Յովսէփ կաթողիկոսը, ինչպէս հիւր ըլլային դաւաճան ուրացողի մը, իրենք գիտէին թէ ո՛վ շղթայած էր իրենց ձեռքերը, ո՛վ այնքան արիւն արցունք թափած էր հայ մայրերու աչքերէն, և քանի ազնուական տիկիններ կը հեծէին հիմա գերութեան դաշտերու մէջ և քանի նախարարներ երկաթէ շղթաներու տակ էին. այս ամէնուն դահիճը Վասակն եղած էր, Վասակը հայրենիքի թշնամին և Քրիստոս դատապարտող Պիղատոսը։

— « Սիրեցէք զթշնամիս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց ». փայլակի պէս անցաւ Ղեւոնդի միտքէն Աւետարանի այս խօսքը, բայց նա ատելութիւն չունէր, արդարութեան բողոքն էր որ կը շղթայէր իր սիրտը և իրմէ աւելի զօրաւոր զգացում մը կ՚ըսէր։ — Ո՛չ, Վասակ, մենք քեզի սեմը կ՚ըսէր։ — Ո՛չ, Վասակ, մենք քեզի սեմը չենք կրնար ըլլալ, Աւարայրի զանակից չենք կրնար ըլլալ, Աւարայրի

նահատակներու արիւնը պղծած պիտի ըլլանք, մայրերու արցունքը անարգած։

— Ահաւասիկ վրանը զարկին, ընթրիքը պատրաստ է Գողթնի գինիներով, ընդունեցէք հրաւէրս, կրկնեց Վասակ, ողոքական շեշտով։

— Կը ցաւինք որ պիտի չկարենանք ձեր ընթրիքին մասնակցիլ Սիւնեաց տէր, պատասխանեց Ղեւոնդ երէցը։

— Ինչո՞ւ, դուք յոգնած և անօթի էք, թերեւս չոր հաց մ՝իսկ ձեզի չտուին այս մահուան ճանապարհին վրայ։

— Հացին կարօտը չէ որ մեզ կը նեղէ, ըսաւ Յովսէփ կաթողիկոսը, Վասակ մարզպան, այլ մեր ժողովուրդին ահաւոր ցաւը, և մենք պէտք ենք ապաշխարել որ Աստուած գթայ իր հաւատացեալներուն՝ սրբելու անոնց արցունքները։ Մենք ուխտած ենք պահք ու ծոմ պահել։ Քահանան ամէնէն աւելի պէտք է ողբայ և ապաշխարէ իր ժողովրդին համար։

Վասակի վրանին վարագոյրները բացուեցան, ջահերը կը պլպլային մեծաքեստ ծալքերուն տակ, գորգերը փռուած ծաղկազարդ դաշտի մը պէս։ Նա գլխիկոր հեռացաւ կալանաւորներէն, մինչ սուրբ քահանաները տարուեցան մութ սենեակ մը, չոր հողին վրայ անցնելու այդ վերջին գիշերը։ Անոնք հազիւ կրցան ընդարմացած մարմիններն տարածել, ոսկորներու ճարճատումներ լսուեցան, յոգնութեան հառաչներ խոյս տուին այնքան համակամ բերաններէ։ Քիչ վերջ սաղմոսի մեղմ ու հոգեպարար մեղեդի մը բարձրացաւ մթութեան մէջէն, անոնք հոգեւոր ընթրիքի նստած էին, երգն էր իրենց հացը, աղօթքն էր արբեցնող գինին։

Վասակ ընկողմանած փափուկ բարձերու վրայ, իր մտերիմներու հետ շուտով մոռցաւ շղթայուած քահանաները, ուզեց զուարթ ըլլալ, երջանիկ զգալ, համոզել իր սիրտը վաղուան զեղեցիկ փառքերով, խեղդել անէծքի այն սուր ճիչերը զոր լսեց անարգուած մայրերու, հարսերու բերաններէն Սիւնեաց բերդերուն տակ։ Հրամայեց բերել Գողթնի գինին, գուսաններ և բամբռահար երիտասարդներ բարձրացուցին իրենց նուագարանները, քաշեցին լարերը և ուրախութիւնը սկսաւ։ Պէտք էր այդ երեկոյթը անսովոր ըլլար, այս էր իր կամքը, նախերգանք մը այն փառաւոր հանդէսներուն որ պատրաստուած էին Տիզբոնի մէջ իր թագադրութեան համար։

Պար մը, պար մը — հրամայեց Վասակ։ հեզաճկուն երիտասարդներ թեւ թեւի անցան ու ելան ալիքի պէս յորձանուտ՝ գառնալով մեծ իշխանին շուրջը։ Զհամբերից, ինքն ալ մտաւ պարին մէջ. հակառակ հասուն տարիքին կաքաւեց հովի թեթեւութեամբ։

Ցիմարներ — մռլտաց ինքնիրեն, պարի ցնորքներով գինովցած, յիմարներ, դուք չէք գիտեր թէ այս ճանապարհը մահուան կը տանի ձեզ, իմ նուէրս պիտի ըլլաք արքայից արքային։ Դուք զիս չուզեցիք ձեզի թագաւոր, ես պիտի թագաւորեմ առանց ձեր կամքին Աւարայրներու վրայ, Աբարաներու ձիւնապատ գագաթին։

Դիմացի տան մութ սենեակին մէջ անոյշ մեղեդիները երկչոտ թեւերով կը սաւառնէին կալանաւորներու վերեւ։ Դիշերը երկարեցաւ, և խոր լռութիւնը պատեց բոլորը, մէկ կողմէն սիրոյ հառաչանքները մեղմութիւն կու տային սրտերու, միւս կողմէն ոսկեղէն երազներ անհամբեր քուն մը։ Պարսիկ պահակը կ՝երթեւեկէր մթութեան մէջ կալանաւորներու ղրան առջեւ հազալով գորշ պատերու դէմ։

Արշալոյսը շուտով բացուեցաւ, ծիրանի արեւ մը փռեց իր ոսկի թեւերը ընդարձակ հորիզոններու վրայ որքան աչքը չէր կրնար։

Վասակ արդէն աշտանակած էր իր սեւ երիվարը, զինուորներու և ազնուականներու բազմութիւնը իր շուրջն առած մեկնումի հրամանին կը սպասէին՝ երբ կալանաւորները դուրս ելան սենեակէն։

— Մեկնինք, հրամայեց Սիւնեաց իշխանը, բազմութիւնը քակուեցաւ և ձիերն սկսան դոփելով հողը՝ առաջ երթալ. Վասակ քիչ մ՝ետեւ մնաց, ինքն ալ շարժեցաւ սպաներու մէջ։ Յանկարծ ուժգին ձայն մը հասաւ իր ականջին։

— Սիւնեաց տէր, Սիւնեաց տէր։ Մէկը կը կանչէր զինքը, չոր ու կեղեքիչ շեշտով։ Ետ դարձաւ իր ձիով և քաղցր կերպարանք մ՝առած որ գիմակ էր և ոչ իրական կանութիւն։

— Ինչ կը փափաքիք, ով հայրեր, պատասխանեց Վասակ։

— Ամէն բանի վրայ խօսեցանք միասին, յիշեցինք հին ու նոր օրերը, սակայն ամէնէն կարեւորը մոռցայ հարցնելու թէ ո՞ւր կ՝երթաս այսքան բազմութեամբ։

Անծանօթ կասկած մը խոցեց Վասակի սիրտը, ինչո՞ւ այս հարցումը, չէի՞ն գիտեր թէ կ՝երթար Աբեաց արքային Հայաստանի փառաւոր թագն առնելու։

— Զարմանալի հարցում, պատասխանեց Վասակ, Աբեաց արքային Հայաստանի թագն առնելու կ՝երթամ փոխարէն այնքան հաւատարմութեան և երախտիքներու։

Ահաւոր շանթ մը փրթաւ Ղեւոնդի աչքերէն որ հնձեց արեւի ճառագայթները։

— Դո՞ւն թագ առնելու, Աւետարանի, սատանան քեզի այդ խորհուրդը տուաւ, և սատանան քեզ պիտի կործանէ. եթէ գլուխդ ողջ Հայաստան դառնաս, թող Աստուած ինձ հետ խօսած չըլլայ։

Սարսափեցաւ Վասակ այս կայծակէն, չէր սպասեր այսպիսի յայտարարութեան մը։ Վհատութեան սեւ ամպ մ՝իջաւ իր աչքերուն վրայ, կարծես մութ քօղ մը պատեց այն երկար ճանապարհը որ զուարթօրէն կը հեռանար զէպի Աբքայից արքային պալատը։ Նայեցաւ, երկա՜ր նայեցաւ ալեւոր քահանային, դարձեալ փոթորկեցին իր սրտին մէջ այն ազազակները որ կը լսէր յաճախ հազարաւոր բերաններէ. Վասակ ուրացող, Վասակ դաւաճան, և հիմա կարծես այդ ծերունին գերեզմանի քար մը կը դնէր իր ամբողջ յոյսերուն վրայ։ Ասպանդաւեց ամբողջ յոյսերուն վրայ։ Ասպանդաւեց ամբողջ յոյսերուն վրայ։ Ասպանդաւեց

— Ահա Տիզբոնը, գոչեց տաճնապետը մատով ցոյց տալով։

— Դեւերու քաղաքն է, ըսաւ Ղեւոնդ երէցը։

— Սաղայէլի մայրաքաղաքը, վրայ բերաւ Մուշէ քահանան։

— Ուրիշներ մեծ գումարներ կը ծախսեն Տիզբոնը տեսնելու համար, իսկ դուն ձրի և փառաւոր ջորի մը նստած, գոհ չե՞ս Մուշէ, ըսաւ Սահակ եպիսկոպոսը։

— Ես իմ անշուք Աղբակս այդ պալատներուն հետ չեմ փոխեր, պատասխանեց Մուշէ։

Քաղաքի արուարձաններուն մօտ բոլորը երեսնին խաչ հանեցին, տարօրինակ սարսուռ մը զգացին որ ոչ վախ էր և ոչ անձկութիւն, մութին մէջ քալողի անորոշ տպաւորութիւն էր, որ շուտով հեռացաւ իրենց սրտերէն։

Տաճնապետը զիրենք առաջնորդեց արքունի բանտը և ամբաստանական նամակով յանձնեց բանտապետին։ Հոն պիտի մնային այդ գիշերը կրկին շղթաներու մէջ։ Ոչ ոք խորհեցաւ պատառ մը հաց և գաւաթ մը ջուր տալու։ Դարձեալ իրենք զիրենք գտան մենակ և տրտում խաւարին մէջ, իրենց պայծառ հոգիները եղան արեւ և իրենց անոյշ մեղեդիները սիրոյ ընթերք։

Ղեւոնդ երէցի Տիզբոն հասնելու լուրը այդ երեկոյ իսկ տարածուեցաւ արքունի շրջանակներու մէջ, կ'ուզէին տեսնել այդ տարօրինակ մարդը, թերեւս հսկայ մը, սարսափելի մէկը կ'երեւակայէին։ Այն մարդը որուն ափերուն մէջ էր ամբողջ Հայաստանը, որուն մէկ խօսքը աստուածային պատգամ էր ազնուականին ու զինուորականին, ռամիկին ու գիւղացիին համար, պէտք էր գերբնական բան մ'ըլլար։

Յաջորդ առաւօտը շղթաներու շառաչին մէջ ութը կալանաւորները առաջնորդուեցան արքունի դատարանը, անոնք անցան ծանր ու տաժանելի քայլերով քաղաքին նեղ փողոցներէն, ամբոխը կը դիտէր իրենց անցքը։ Յանկարծ ամբոխին մէջէն մէկը, հագուած տարօրինակ կերպով սպիտակ պատմուճան մը, դիւահարի պէս մոլեգնած գոչեց. Ղեւոնդն է, Ղեւոնդն է։ Նա մոգ էր և Անգղ գիւղի մէջ մահէն հազիւ ազատած, տեսած էր Ղեւոնդին շանթահար աչքերը և սաստիկ տպաւորուած սարսափէն։ Ամբոխը աւելի ստուարացաւ. սպաննեցէք, կը գոչէին, աստուածներն սպաննողներն են, մոգերը ջարդողները, սպաննեցէք։ Զինուորները շղթայ կապած կալանաւորներու շուրջը բռնութեամբ հազիւ կրցան ազատել այդ կատաղի վոհմակէն։

Վասակ կը հանգչէր մեսաքսէ բարձերու մէջ իր վերջին ոսկեղէն երազներով։

Միհրներսեհ հազարապետը զինուորական դատաւորներու հետ կը սպասէր այդ համբաւաւոր գերիներուն։ Շատ լսած էր անոնց մասին, մանաւանդ կ'ուզէր Ղեւոնդը տեսնել, այդ Աւարայրի արծիւը որ իր թեւերուն տակ առած էր հսկայ աշխարհ մը։ Ութը կալանաւորները իրարու շղթայուած կանգնեցան իր առջեւ։ Զափեց աչքերով այդ մաշած և հիւծած դիակները։

— Ո՞վ է Ղեւոնդ երէցը, հարցուց յանկարծ պոռթկալով։

— Ղեւոնդ երէցը պարսկերէն չէր գիտեր ու չէր ալ սիրեր այդ թշնամի լեզուն։ Սահակ եպիսկոպոսը թարգման եղաւ երկու ախոյեաններու մէջ։

— Ես եմ, պատասխանեց Ղեւոնդ։ Հազարապետը չհաւատաց աչքերուն, այդ վտիտ փոքրահասակ և հիւանդոտ ծերը ինչպէս կրնար ազգ մը հմայել, և ոտքի հանել ամբողջ ժողովուրդ մը։

— Դո՞ւն, դո՞ւն ես Ղեւոնդ։

— Այո՛, ես եմ, պատասխանեց քահանան։ Ասիկա որ կը տեսնես, երիտասարդ և թուխ մօրուքով՝ Յովսէփ կաթողիկոսն է, Հայաստանի հոգեւոր պետը։ Ասիկա Սահակ եպիսկոպոսն Ռշտունեաց, իսկ մնացածները քահանաներ են, պաշտօնեաներ բոլորը ճշմարիտ Աստուծոյ։

— Բոլորդ ծանօթ էք ինձ, ըսաւ հազարապետը։

— Մենք լոյսին տակ գործեցինք, պատասխանեց Ղեւոնդ։

— Դուք սրբազան կրակը ջուրը նետեցիք։

— Այո՛, մենք ձեր կրակը ջուրը նետեցինք ու խեղդեցինք։

— Դուք մոգերը ջարդեցիք։

— Այո՛, մենք մոգերը ջարդեցինք։

— Դուք Հայաստանը թագաւորին դէմ ապստամբեցուցիք։

— Այո, Հայաստանը կոյր թագաւորին դէմ ապստամբեցուցինք ճշմարիտ թագաւորին ծառայելու։

— Դուք մահապարտ էք։

— Մենք մահապարտ ենք քեզի համար։

— Դուք պիտի մեռնիք։

— Մենք սիրով կը մեռնինք։

Դարձեալ ծանր և շառաչուն շղթաներով վերադարձան բանտ, իրենց կապանքներու ձայնը կարծես թէ մարտի յաղթական երգ էր, գուարթ էին՝ թէպէտ իրենց շրթներէն արիւն կը կաթէր և կքած էին երկաթի ծանրութեան տակ։

Առաւօտեան կանուխ երբ դեռ արշալոյսը չէր բացուած, և աստղերը կը պսպղային աշտարակներու ծայրերը թառած, ու հսկայ մայրաքաղաքը կը ննջէր սպառնացայտ օրերու մղձաւանջին տակ՝ բանտին դռները բացուեցան, վեց նիզակաւոր զինուորներ շրջապատեցին կալանաւորները. դուրսը պատրաստ էին ձիերը, դարձեալ պիտի սկսէին մահուան ճանապարհը։

Դժուարութեամբ նստան այդ խեղճուկ գրաստները, ոչ ոք իրենց հարցուց թէ ո՞ւր կ'երթային։

— Քշեցէք — հրամայեց աստիճանաւոր զինուոր մը։ Անցան փողոցներէն և արեւելեան դռնէն դուրս ելան։ Տակաւին կիսամութ էր և երկինքը նոր սկսեր էր կապուտնալ։ Թերեւս օրեր, շաբաթներ պիտի քալէին այսպէս դէպի անծանօթ աշխարհ մը։ Միակ կսկիծ մը որ ունէին հայրենիքն էր որ աւելի կը հեռանար և ոչ մէկ յոյս կար բանտուած, տարագիր սիրելիներէն լուր մ'առնելու։

Դարձեալ գեղնորակ երիզի նման ճամբան սկսաւ բացուիլ ու ծալլուիլ դէպի արեւելեան հորիզոնը, կ'երթային անոնք լուռ և աղօթալից, մեղմ մրմունջ մը միայն կը լսուէր՝ ինչպէս մեղուներու երեկոյեան բզզոցը։ Կանաչ դաշտերը վերջացան և սկսաւ աւելի տաք ու չոր անապատ մը։

— Աստուծոյ սիրելիներուն համար աշխարհի ամէն կողմ խորան ու տաճար է, մահը նոյնն է ամէն տեղ, ըսաւ Ղեւոնդ երէցը, լռութիւնը խզելով։

— Տէր Մուշէ, ըսաւ կաթողիկոսը, քաջութիւն, կը վերջանան այս նեղութիւնները և շուտ կը հասնինք երկնային օթեւանը։

— Մահէն չեմ վախեր, ըսաւ քահանան, բայց սրտիս կէսը մնաց հայրենիք, հոն իմ որբուկներս ինձ կը սպասեն։

Քահանան մահուան այս նոր ճանապարհին վրայ թափեց իր առաջին արցունքները։ Հաւատքը զօրաւոր էր, սակայն սիրտը չէր համաձայներ ու ապստամբ կը տրոփէր։ Բոլորն սկսան միտամբ կը տրոփէր։ Բոլորն սկսան միաբարական սաղմոս մը երգել, միակ բաւականը վիրաւոր սրտերու։

Անապատը աւելի դաժան և անտանելի կը դառնար, խեղդիչ օդ մը անբոց կրակը դառնար, խեղդիչ օդ մը անբոց կրակարանի վերածած էր մթնոլորտը։ Ծանր և հեւալով կը յառաջանային, ոչ գիւղ կար ոչ մարդկային ստուեր։

— Ո՞ւր կ'երթային, ոչ ոք հարցուց, զինուորները լուռ և վերապահ ոչ մէկ բացատրութիւն տուին։ Շաբաթներ յետոյ հասան նահանգային քաղաք մը հողաշինուած լերան մը կողին։ Աքսորեալներու քաղաքն էր, թշուառներու հայրենիքը։

Ինչ էր այդ քաղաքին անունը, ոչ ոք իրենց ըսաւ. բնակիչները վարժ էին աքսորեալներու, հետաքրքրութեամբ նայեցին

ցան այս նոր կերպարանքով մարդերուն, սեւ հագուած, գլուխնին քօղ առած սգաւորներ էին, թերեւս մահուան պաշտօնեաներ։

Քաղաքէն քիչ մը դուրս կը գտնուէր պետական բանտը, պարսպապատ և ընդարձակ բակով. հոն առաջնորդեցին ութը կալանաւորները։ Զինուորներու աստիճանաւորը, մէկիկ մէկիկ կարգաց զատապարտեալներու անունները, և զանոնք յանձնեց բանտապետին։ Երկաթէ դուռը փակուեցաւ իրենց ետեւէն, և անոնք բաժնուեցան աշխարհէս։

— Քակեցէք շղթաները, հրամայեց բանտապետը սպասաւորներուն, յատկացուց առանձին սենեակ մը և առանց խօսք մ'ըսելու հեռացաւ։

Կալանաւորները յոգնած, միջակտոր տարածուեցան չոր տախտակներուն վրայ։ Քիչ վերջ ութը կտոր քաշկէն բերին և դրակ մը ջուր, ոչ երբեք այնքան կաբօտով ու ախորժակով կերած և խմած էին քան հիմա։ Իսկոյն անոյշ թմբուքիւն մ'եկաւ իրենց վրայ ու քնացան։ Ամէն մէկն իր հոգն ու վիշտը մոռցաւ, ամէն մէկն ունեցաւ գեղեցիկ երազներ, յոյսեր մօտալուտ ազատութեան։ Երեկոյեան մօտ արթնցան բաւական կազդուրուած, մարմիններուն հետ հոգիները զուարթ դարձեալ բացին իրենց սպիտակ թեւերը ազօթքի մեղեդիներով։ Բանտապետը մօտեցաւ իրենց դրան, երգի քաղցրութիւնը երկնային բան մը թուեցաւ իրեն, չէր լսած երբեք բանտարկեալներու մէջ երգ, բայց եթէ խռպոտ հառաչանք։ Բացաւ դուռը, ութը կալանաւորները ծնրադիր հողին վրայ կ'աղօթէին։

— Կրնաք, ըսաւ, բակը ելլել և քիչ մը շունչ առնել։ Բանտապետը չոր նայուածք մը նետեց և հեռացաւ։ Ինչո՞ւ չէր խօսեր, ինչո՞ւ չէր հարցներ թէ ո՞վ էք, ի՞նչ յանցանք ըրեր էք։ Իրենց այնպէս կը թուէր թէ մարդը իսը վիշտ մ'ունէր, որովհետեւ նայուածքին մէջ դառնութիւն կար։

Ամիս մը չանցած տարօրինակ շշուկ լսուեցաւ բանտին մէջ, սպասաւորները որ ընտանեցեր էին կալանաւորներու հետ, լուր տուին թէ Նիւշապուհ քաղաքը հասեր են ուրիշ հայ բանտարկեալներ, և քանի մը նախարարներու անուններ ալ տուին։ Երեկոյեան մօտ յանկարծ դղեակին լայն դռները բացուեցան, առանց իշխանական զարդի, հասարակ կալանաւորներու պէս ներս մտան շուրջ 40 հոգի, իւրաքանչիւրը փոքրիկ կապոց մը թեւին տակ, փոշելից և քրտնած։ Իրենց հետ կային նաեւ փոքրիկներ։

— Աբշաւիր զո՞ւն ես, հարցուց Դաւոնդ երէցը և զրկուեցաւ նախարարին հետ, ուրախ արցունք մը թրջեց քահանային կուրծքը։ Ի՞նչ կը տեսնեմ, մեր բոլոր պատուական իշխանները։

Ո՞րքան բարի է Աստուած որ մեզ դարձեալ իրարու միացուց։ Հրճուանքի և եղբայրական կարօտի ալիք մը լեցուց բոլորին սրտերը, այդ բանտը այլեւս իրենց համար երջանիկ հայրենիք էր, եկեղեցի էր, իշխանական դղեակ էր։ Տեղաւորուեցան բոլորը որքան կարելի էր։ Շարեցին փսխաթները որմերու տակ ու նստեցան։ Շատ բաներ ունէին խօսելիք, շատ հարցումներ ըրին եկեւորներուն։ Աբշաւիր Կամսարականը պատմեց Վասակի դատաստանը և ցկեանս բանտարկութեան դատապարտուիլը, թէ ինչպէս վրայէն քաշեցին իշխանական զգեստները ու զինքը զնդանը նետեցին։ Նոր հրամանով անոնք պէտք էին այդ դղեակ բանտին մէջ ազատ ըլլալ և աւելի լայն ապրիլ։ Տակաւին Հայաստանի մէջ պատերազմիկներ կային, դղեակները և բերդերը Հայերու ձեռքն էին ու վանգաւոր էր իրենց զբաւոր բանակին կեանքը, այս էր պատճառը որ մեղմութիւն կը պարտադրէր կառավարութեան։

Բայց իրենց ուրախութիւնը շատ կարճ տեւեց։ Երկու օր յետոյ կանչեցին Աբրահամ սարկաւագը և Սամուէլ քահանան, արքունի հրամանով անոնք պէտք էին մեկնիլ հեռու աշխարհ մը։

Բոլորը այն զգացումն ունեցան թէ մահուան կ'երթային։ Դաւոնդ քաջալերեց զիրենք, կաթողիկոսը օրհնեց և յուզումով զրկեց երկուքն ալ, մանուկի պէս լացին բոլորը և հսկայ դուռը բաժնեց յաւիտենապէս զիրենք։ Բանտին մէջ պարապութիւն մը որ թիւն մը տիրեց, պարապութիւն չուանցաւ սրտերուն մէջ և քաջութիւն չունէին այդ օրը խօսելու։ Դարձեալ Դաւոնդն էր որ խզեց լռութիւնը ըսելով.

— Ով եղբայրներ ինչո՞ւ տրտմութիւն և սուգ, անոնք մեզմէ աւելի երջանիկ, մեզմէ աւելի շուտ պիտի հասնին արքայութեան փառքը վայելելու։

Քիչ մը մխիթարուեցան բոլորը, այդ օրը սաղմոսներուն մասնակցեցան նախարարներն ալ և շուրջ յիսուն հոգիներու թրթռուն և ուժեղ ձայնը մինչեւ քաղաք լսուեցաւ։

Բանտապետն ալ փոխուեցաւ, իր տեղն եկաւ մոգպետ մը, գիրուկ և լայնադէմ մէկը, սպիտակ պատմուճանով, վիզէն կախած էր յուռութներ ու կը համարուէր իրենց կրօնքին մեծ գիտնական և մոլեռանդ պաշտպան մը։

Մասնաւորապէս քահանաներուն դէմ ատելութիւն մը ցոյց տուաւ, կոշտ կը վարուէր, կը նախատէր, ստէպ անիրաւ տեղը պատիժներ կու տար, զրկելով հացէ, կամ ջուրէ, կամ արգիլելով յարաբերիլ նախարարներու հետ։ Բայց քահանաները աւելի զուարթ և տոկուն կեցուածք մը ցոյց տուին, նա կը կատղէր այս դիմադրական ուժին համար, կասկածներ ինկան միտքը, թերեւս իր սպասաւորները ամէն դիւրութիւն կ'ընծայէին։ Բաժնեց զանոնք նախարարներէն, նետեց հեռաւոր բանտ մը, մութ, խոնաւ և նեխած օդով տեղ մը։ Քահանաները աւելի զուարթ կերպարանք մ'առին, դիմադրական ընդդիմ կը զօրանար իրենց մէջ ամէն անգամ որ նոր խստութիւն մը կը հնարէր բանտապետը։

Չէր կրնար բացատրել իր ամբողջ գիտութիւնը թէ ինչ ոյժ էր որ անոնք ունէին այսքան չարչարանքներու դիմանալու։ Հացը և ջուրը պարզապէս չմեռնելու համար կը տրուէր, յաճախ խարազանի հարուածներով զանոնք կը տանջէր, մանաւանդ այն ծեր և նիհար քահանան՝ որուն անունը լսած էր և դէմը մասնաւոր քէն ունէր։ Քառասուն օր այսպէս տանջեց, բայց չկրցաւ սրբել անոնց երեսէն զուարթութեան ճառագայթը։ Ինքը կը կնքէր դուռը, վստահ էր թէ մարդ գաղտնօրէն չէր այցելեր։ Շատ անգամ չէր վստահեր իր պահակներուն, ինքը կը մնար զրան վրայ, բայց և այսպէս անոնք կարծես աւելի կը զուարթանային, աւելի ուժեղ կը լսուէր երգերու ձայնը։ Անոյշ բուրմունք մ'ալ սկսաւ առնել բանտի մէջէն, կախարդութիւն պիտի ըլլայ խորհեցաւ։ Գիխարդութիւն պիտի ըլլայ խորհեցաւ։ Գիշեր մը թանձր մթութեան մէջ լոյսի պսակներ տեսաւ վեց բանտարկեալներու վրայ, չհաւատաց աչքերուն։ Ուրիշ անգամ ամէն մէկ գլխուն վրայ վառած կանթեղներ տեսաւ, երազ է ըսաւ, կախարդութիւն՝ որուն մէջ շատ քաջ են այս կրօնքի պաշտօնեաները։ Բայց կասկածը մը, տարօրինակ զգացում մը կը փորէր իր սիրտը։ Ամէն գիշեր անդիմադիր ոյժ մը զինքը կը մղէր դէպի բանտը, նեղ ծերպերէն կը դիտէր, անոյշ բոյրը զինքը կը զինովցնէր, երգերու հեշտութիւնը զինքը կը վերացնէր։ Գիշեր մը ա՛լ չկրցաւ համբերել, ականջ դրաւ դռնէն, լսեց երգին վերջին վանկերը, ապա խաղաղ լռութիւն, բանտարկեալները քնացան, սակայն այն զարմանալի լոյսը դարձեալ իջաւ ամէն մէկուն վրայ։ Զարկաւ դուռը, կանչեց Ռշտունեաց եպիսկոպոսը։

— Ո՞վ ես, ի՞նչ կ'ուզես, հարցուց եպիսկոպոսը։

— Ես եմ, զողալով պատասխանեց մոգպետը, ներս կ'ուզեմ գալ։ Հրեց դուռը և բացաւ, արթնցան բոլորը։

— Ընդունեցէք զիս ալ ձեր մէջը, ես

ալ քրիստոնեայ եմ, ըսաւ, համբուրելով անոնց ձեռքերը։ Պատմեց ապա եղածները, խօսեցաւ թէ լոյս տեսած էր Իւրաքանչիւրին վրայ, առած էր անոյշ բոյր մը՝ աւելի հեշտ քան թագաւորական պարտէզին վարդերը։ Ուրախութենէն նա կ'ոստոստէր, ծափ կը զարնէր, կրկնելով. Ես քրիստոնեայ եմ։ Հանեց վիզէն յուռութները և նետեց գետին, ինչ նշաններ որ ունէր մազդէզական կրօնքին, օղեր, մատներու բժժանքներ, արեւուն ճակատին նշանը, ապշոպելով գետին զարկաւ։ Բահանաները չզարմացան, անոնք գիտէին թէ Աստուած քարէն ալ զաւակներ կը հասցնէր։ Գոհութեան երգ մը բարձրացաւ երկինք մութ խաւարէն, ապա դարձեալ տարածուեցան խշտեակներու վրայ։ Մոգպետին աչքերը չէին փակուեր, յառած կը նայէր անորոշ մութին մէջ, կարծես թէ նորէն լոյսի, ձայնի մը կը սպասէր։ Կ'ուզէր քրիստոնեայի պէս աղօթել, բայց բառեր կը պակսէին, կրկնեց անկապ կերպով ինչ որ լսած էր քահանաներէն։

Նայեցաւ քնացողներուն վրայ, արդեօք լոյսի կանթեղներ պիտի տեսնէ՞ր։ Ցանկարծ ձեղունը կարծես բացուեցաւ, տարօրինակ լոյս մը ծագեց. արշալոյս չէր, և ոչ մոմի լոյս. լոյսը գոյներ առաւ, դէմքեր տեսաւ զորս չէր ճանչնար, անոնք մօտեցան իրեն, հիմա աւելի որոշ էին, ոսկեղէն զրահներով և սաղաւարտ գլուխը մէկը իրեն մօտեցաւ, և ըսաւ։

— Ես Վարդանն եմ. անոր ետեւէն ուրիշ զօրականներ, Խորէնը, Հմայեակը, Տաճատը, Արսէնը, ահա երկու փոքրիկներ ալ Վահան և Գարեգին, բայց շարքը չէր վերջանար, հազարներ կ'ելնէին երկինքէն։

Մենք Աւարայրէն կու գանք ըսաւ Վարդան. քիչ ատենէն ասոնք ալ, դուն ալ պիտի գաս մեր քովը, Աւարայրը երկինք փոխադրուած է։ Ցանկարծ անիմանալի եղանակ մը բռնեց ամբողջ երկինքը, լոյսը կամաց կամաց մթնեցաւ։ Մոգպետը քացած էր, աշխարհ չկար իրեն համար, ինքը հոն մինակ էր։ Արթնցաւ խոր վերացումէ մը և իսկոյն Դեւոնդին կողը խթեց։

— Ելէ՛ր, ելէ՛ր, Վարդանը տեսայ, Աւարայրի դիւցազները տեսայ, ո՜հ արթնցէք բոլորդ։ Պատմեց անոնց իր տեսիլը, երջանիկ մահը որ կը մօտենար։ Աւ ո՞վ կրնար քնանալ, երգեցին առաւօտեան սաղմոսները, կարծես շարունակելով երկինքի երգերը։ Մոգպետը ինքն ալ միացաւ, յուզուած արցունքով երգեց ինչ բառեր որ կրնար քաղել իր մաքէն։

Սափորով ջուր բերին և կատարեցին մկրտութեան խորհուրդը, Սահակ եպիսկոպոսը մկրտեց և Դեւոնդ երէցը եղաւ կնքահայրը։ Ցեռոյ համբուրուեցան նորածինին հետ։

Իսկոյն հրամայեց Մոգպետ իր սպասաւորներուն պատրաստել իր տանը մէջ մեծ սեղան մը։ Սպասաւորները այդ դաժան մարդը բոլորովին փոխուած տեսան, այժմ գերբնական լոյս կար դէմքին վրայ։ Եկան նախարարներն ալ։ Ցնծութեան երգով բարձրացան մոգպետի յարկաբաժինը, սեղանը արդէն պատրաստ էր։ Ամէն մարդ կը զգար թէ վերջին ընթրիքի նստած էին։

Կաթողիկոսը ուզեց որ այդ սեղանին գլուխ բազմէր Արշէնը, Եղեգեակ գիւղին քահանան, ամէնէն խոնարհ և անուս կղերականը։

Պարզամիտ և խոնարհ երէցը սարսափեցաւ այդ պատիւէն, աղաչեց, ըմբոստացաւ զրեթէ, սակայն իր հոգեւոր պետերը ստիպեցին որ ամէնէն վեր բազմի։

— Ինչո՞ւ այս պատիւը, արդեօք ծածուկ բան մը կայ։ Եթէ ես պիտի ըլլամ առաջին նահատակը, պատրաստ եմ։

Կաթողիկոսը կ'ուզէր Արշէնի բերնէն լսել այս կորովի վկայութիւնը, համբուրեց զինքը ըսաւ. — Վաղը Վարդանի հետ միասին պիտի ըլլանք և հոն պիտի շարունակենք սիրոյ ընթրիքը։

— Թերեւս ինծի համար էր, այս մոգպետին համար էր այդ տեսիլը։ Ո՛չ, սիրելի հայրեր, թերեւս դուք կը կասկածէիք իմ մասիս, ոչ. սիրով կը մեռնիմ արիւնս խառնելու Աւարայրի սուրբերու արեան, ըսաւ Արշէն քահանան՝ կարծես սիրոյ բոց կտրած։

Երգեցին բոլորը միասին — « Հաւատաս. ըեսցէ մահս մեր ընդ մահու արդարոց և հեղումն արեան մերոյ ընդ արեան սուրբ մարտիրոսաց »։

Ամէնէն դժուարն եղաւ բաժանումը։ Ոտքի ելան բոլորը, խուլ հեծկլտուք մը բռնեց հսկայ սրահը։

— Մի՛ յուզէք մեր սրտերը, ով եղբայրներ, ըսաւ Դեւոնդ երէցը, մենք մեռնելու չենք երթար, այլ յաւերժօրէն ապրելու։ Մահ իմացեալ անմահութիւն է։

Նախարարները համբուրեցին քահանաներու ձեռքերը։ Երբեք Հայաստան այսքան սրտերու միութիւն չէր տեսած։

— Ցտեսութիւն, ըսին նախարարները, աղօթեցէք մեզի համար։

— Միշտ միասին, կրկնեցին քահանաները և՛ երկինք և՛ հայրենիքի մէջ։

Այդ գիշերը ոչ ոք քնացաւ, ամէնքն սալ գիտէին թէ առաւօտեան ահաւոր դէպքեր պիտի պատահէին. անձկանօք սպասեցին վերջին արշալոյսին, որ ամենագեղեցիկ պիտի ըլլար իրենց կեանքին մէջ։ Մոգպետը չբաժնուեցաւ քահանաներէն, շղթայել տուաւ ինքզինքը և սպասեց գեղեցիկ ու զինուորներ լեցուեցան բակը։

— Քրիստոնեայ եմ, գոչեց մոգպետը, զիս ալ սպաննեցէք։

Դահճապետը քարացաւ իր կեցած տեղը, աչքերը մթնցան, գոյնը նետեց։ Հաւատա՞լ թէ չհաւատալ — Քրիստոնեայ եմ, աւելի ուժգին կրկնեց մոգպետը։

— Քալեցէք բոլորդ, ըսաւ դահճապետը և ահա ծանր շղթաներու շառաչը նորէն սկսաւ, դուրս ելան բանտէն, բռնեցին հեռուտն երկրէ երկինք երկարող ՄԱՀՈՒԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ։

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Հալէպ, 26 Մայիս 1951

© National Library of Armenia